ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1909 Թ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՒ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ

1890-ական թվականների աբդուլհամիդյան կոտորածներին հաջորդեց արեւմտահայերի ձերբակալությունների, հալածանքների ու բռնությունների երկարատեւ մի շրջան, որը ոչ միայն չդադարեց 1908 թ. հուլիսին երիտթուրքական հեղաշրջման եւ օսմանյան սահմանադրության հռչակումով, այլ նաեւ շարունակվեց ու Ադանայի եւ Հալեպի նահանգների հայաբնակ տարածքներում (մասնավորապես՝ Ադանայում, Սսում (Գոզան), Ճեպել-Բերեքեթում, Տարսուսում, Օսմանիեում, Մերսինում, Հասան-Բեյլիում եւ այլ վայրերում) 1909 թ. ապրիլին տեղի ունեցան ծրագրված ու կանխավ մտածված հրեշավոր ջարդեր։

Հիշենք, որ պատմական Ադանան գտնվում էր Դաշտային Կիլիկիայում՝ Սիհուն գետի աջ ափին՝ շրջապատված պարտեզներով։ Այն կապված էր Միջերկրական ծովի հետ։ Չնայած քաղաքի բնական պայմանները այսօր եւս նախկինի պես անբարենպաստ են, սակայն դարեր շարունակ Ադանան եղել է Կիլիկիայի ամենամեծ ու բազմամարդ բնակավայրը։ Առաջին աշխարհամարտի նախօրյակին այն ուներ 60 000 բնակիչ, որի մոտ կեսը հայեր էին[1]։ Շնորհիվ քաղաքի շուրջ գտնվող բարեբեր հողատարածքների եւ գրված աշխարհագրական դիրքի՝ Ադանան դարձել էր հարուստ քաղաք եւ Զուքուր Օվայի գյուղատնտեսական կարեւոր արվարձաններից մեկը։ Քաղաքում զարգացած էին բամբակագործությունը, հողագործությունը, արհեստներն ու առեւտուրը[2]։

Մինչեւ ԺԹ. դ. Ադանան ուներ 12 եկեղեցի, որոնցից մի քանիսը հետագայում վերածվեցին մզկիթների։ Ջարդերից առաջ Ադանայում կար

---

[1] *Տե՛ս* Հ. Տէվէճեան, *Աշխարհագրութիւն Սուրիոյ եւ Լիբանանի. բնական, քաղաքական եւ տնտեսական, Հալէպ, 1933, էջ 94–95։ Ըստ անգլիացի դիվանագետ եւ ճանապարհորդ Ֆերիման Դաքետի՝ կղզի-քաղաք Ադանան ուներ 80 000 բնակիչ, որի զգալի մասը հայեր էին. տե՛ս* F. Duckett, Turkish Atrocities. The Young Turks and the truth about the Holocaust at Adana in Asia Minor, during April, 1909, Yerevan, *2009, էջ 9։*

[2] *Հայերի 40%-ն զբաղվում էր գյուղատնտեսությամբ, իսկ 30%-ն արհեստավորներ եւ խանութպաններ էին. տե՛ս* F. Duckett, *նշվ. աշխ., էջ 8։*

18 մզկիթ եւ 8 եկեղեցի, որոնցից 3-ը պատկանում էին Հայ Առաքելական, մեկը՝ Հայ ավետարանական, իսկ մյուսը՝ Հայ կաթոլիկ Եկեղեցիներին։ Մեկական եկեղեցի ունեին հունական, ասորական ու քաղդեական համայնքները[3]։ Ադանայում էին գտնվում Ս. Մինաս, Ս. Աստվածածին, Ս. Ստեփանոս, Ս. Առաքելոց, Ս. Ղազար, ասորական Ս. Մորոթու (Մորաթու), քաղդեական Ս. Դիլլի (Դալիլա) եկեղեցիները եւ բյուզանդական Ս. Հովհաննես Մայր Տաճարը[4]։

1908 թ.՝ երիտթուրքական հեղաշրջումից եւ սահմանադրության հաստատումից մեկ ու կես ամիս անց, ինչպես Օսմանյան կայսրության մյուս շրջաններում, այնպես եւ Ադանայի նահանգում՝ պատմական Կիլիկիայի տարածքում, «սահմանադրասեր» հայերի եւ հակասահմանադրական մահմեդական պահպանողականության միջեւ առկա հակասությունը լռելյայն վերաճում է հայերի ջարդի սպառնալիքի։

1909 թ. կոտորածների նախբյակին Ադանայի նահանգապետ Ջեւադ բեյը եւ նահանգի զորքերի հրամանատար Մուստաֆա Ռեմզին հրահրում են ազգամիջյան ընդհարումներ[5]։ Միաժամանակ քուրդ Աբդուլ-Գատերը, Քանիզադե Սայիդը, Քերիմ աղան, Կերկելլի Ալին, Բայրաքդարզադե Բեքիրը Կիլիկիայի մահմեդական բնակչության շրջանում կեղծ եւ վարկաբեկիչ լուրեր էին տարածում (իբր քաղաքի Ուլու ջամիի (Մեծ մզկիթի) դռանը հայերը կղկղանք էին քսել եւ այն պղծել), որոնք հուզումներ էին առաջացնում մոլեռանդ մահմեդականության շրջանում։ Այդ առնչությամբ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ. Խապայանը (1902–1939 թթ.) Ադանայի հայոց թեմի առաջնորդ Մուշեղ եպս. Սերոբյանին (Սերովբյան) Սսից ուղարկված 1909 թ. փետրվարի 10-ի գրության մեջ ցավով ու տագնապով հայտնում էր. «...այս ճանավար ազգը արիւն խմելու գազանութեան յագուրդ տալու համար իր սրբութիւնները իր ձեռքով կը պղծէ, ըսելու համար, որ «հայը ըրաւ». դարերով այս մէթօտին հետեւած են....»[6]։

Լուրեր էին շրջանառվում նաեւ, թե իբր մի հայ եպիսկոպոս, որը լուսանկարվել էր արքայական թագը գլխին, շրջում էր Կիլիկիայում եւ

---

[3] *Տե՛ս* Վեր. Հ. Աշճեան, *Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր (Պատմութեան համար), Նիւ Եորք, 1950, էջ 15։*

[4] *Տե՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», Անթիլիաս, 1970, էջ 863–864։*

[5] *Տե՛ս* Ջ. Կիրակոսեան, *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), գիրք առաջին, Երեւան, 1982, էջ 269։*

[6] *«Կիլիկեան կսկիծներ. Վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն 1903–1915», Պէյրութ, 1927, էջ 73–74. նաեւ՝* Մուշեղ եպս. Սերոբեան, *Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, Պոսթոն, 1910, էջ 46։*

հայերին կոչ անում քիչ ուտել եւ ծխել, վաճառել ամեն ինչ, նույնիսկ հագուստը եւ այդ գումարով զենք գնել Կիլիկիայի ազատագրության համար[7]։ Կեղծ լուրերից էր նաեւ այն, որ հայ ապստամբները շուտով գրավելու էին Ադանայի զինապահեստը, որին հաջորդելու էր Հաճընի հայերի հարձակումը Ադանայի վրա[8]։

Իրավիճակն Ադանայում թեժանում է հայկական կոտորածների սարսափով։ Մուշեղ եպս. Սերոբյանը նահանգի հայ ազգաբնակչությանը կոչ էր անում լինել խոհեմ եւ հավատարիմ մնալ պետությանն ու սահմանադրության սկզբունքներին։ Բացի այդ՝ նա մի ընդարձակ զեկուցագիր է ուղարկում Ջեւադ բեյին՝ ներկայացնելով դեպքերի իրական պատկերը, սակայն վերջինս հրաժարվում է այն քննարկել։ Այս անգամ Մուշեղ սրբազանը տեղեկագրի պատճենները եւ սադրիչների անուններն ուղարկում է Կ. Պոլիս՝ Հայոց պատրիարքությանը, կենտրոնական իշխանություններին, հայկական եւ թուրքական թերթերի խմբագրություններին ու պահանջում ստեղծել հատուկ հանձնաժողով՝ փաստերը տեղում ստուգելու եւ հանցավորներին պատասխանատվության ենթարկելու համար։ Սակայն կառավարությունը ոչ միայն անտարբերություն է ցուցաբերում այս հարցում, այլ նաեւ խրախուսում է կազմակերպիչներին[9]։

Կոտորածների նախօրյակին՝ 1909 թ. ապրիլի 1-ին, Զատկին հաջորդած չորեքշաբթի վաղ առավոտյան Ադանայի առաջնորդարանում գումարվում է քրիստոնյա հոգեւորականների եւ ազգային գործիչների մի ժողով, որը կազմում է պատվիրակություն՝ նահանգապետ Ջեւադ բեյի հետ հանդիպելու համար։ Նահանգապետը պատվիրակներին, որոնց թվում էին՝ Պողոս եպս. Թերզյանը, Արսեն քհն. Յեմենիճյանը, հայր Համբարձում Աշճյանը, հանրային դատախազ Արթուր էֆենդին եւ Ադանայի առաջնորդարանի քարտուղարը, հորդորում է՝ «վտանգ բան չկայ...»[10]։ Սակայն իշխանությունների անմիջական հրահրմամբ հենց նույն օրն սկսվում են կոտորածները։

Ադանայի ջարդերի առաջին փուլում՝ ապրիլի 1–4-ը[11], տարաբախտ հայերի մի մեծ բազմություն ապաստանել էր Հայ Առաքելական՝

---

[7] *Տե՛ս* Հ. Սիմոնյան, *Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երեւան, 2009, էջ 38–39։*

[8] *Տե՛ս* Յ. Թէրզեան, *Կիլիկիոյ աղէտը (պատկերազարդ). Ականատեսի նկարագրութիւններ, վաւերաթուղթեր, պաշտօնական տեղեկագիրներ եւ թղթակցութիւններ, վիճակագրութիւններ եւ այլն (կարեւոր պատկերներով), հտ. Ա., Կ. Պոլիս, 1912, էջ 44–45։*

[9] *Տե՛ս* Մ. եպս. Սերոբեան, *նշ. աշխ., էջ 33։*

[10] Վեր. Հ. Աշճեան, *նշ. աշխ., էջ 17։*

[11] *Ադանայի 1909 թ. կոտորածների մասին առավել հանգամանորեն տե՛ս* Ա. Համբարձյան, *Կիլիկիայի 1909 թ. հայկական կոտորածները, ՊԲՀ, 1988, թ. 4, էջ 13–29. նաեւ՝* Ռ. Գասպարյան,

Ս. Աստվածածին եւ Ս. Ստեփանոս, Հայ կաթոլիկ, Հայ ավետարանական ու ասորական եկեղեցիներում, ֆրանսիացի եզուիթների եւ մայրապետների դպրոցում, ամերիկյան «Աղջկանց գոլէճ»-ում եւ միսիոներ Ուիլյամ Զեմբրսի բնակարանում, իսկ Ս. Ստեփանոս եկեղեցու բակում գտնվող Աշխենյան իգական վարժարանը վեր էր ածվել հիվանդանոցի[12]։ Ահա այսպես է նկարագրում ստեղծված իրավիճակը Ս. Ստեփանոս եկեղեցում պատսպարվածներից մեկը. 1909 թ. ապրիլի լույս 1-ի գիշերը. «Երկսեռ ժողովուրդն ամբողջապէս ծունկի եկած աղեկտուր եւ լաց ու կոծերով «Տէ՛ր, ողորմեա՛» կը կանչէր, եւ դուրսը խուժանը եկեղեցւոյ վրայ... քարիւղ կը սրսկէր ջրահաններով... եկեղեցւոյ առաջնորդարանը կրակ առած էր։ Եկեղեցւոյ բակն ալ ելլել անկարելի դարձաւ, որովհետեւ կարգը եկեղեցիին եկած էր։ Տաճարին ներսը սոսկալի տաքով՝ խեղդող մուխ մը սկսաւ լեցուիլ։ Հակառակ ամբողջապէս քարաշէն ըլլալուն՝ ջերմութեան սաստկութենէն գմբէթը, պատերն ու մարմարեայ սիւներն ճաթեցան... ճշմարիտ դժոխքի մը վերածուած էր Ս. Ստեփաննոս եկեղեցին»[13]։

Խելակորույս տղամարդիկ ու կանայք, երեխաներն ու ծերերը, ողջերն ու վիրավորները, բոլորը հրո ճարակ դարձան։ Բացառությամբ Մայր եկեղեցու՝ պղծվեցին եւ հրկիզվեցին բոլոր եկեղեցիները, խորտակվեցին սեղաններն ու խաչերը, թալանվեցին եւ ոտնատակ արվեցին սրբությունները։

Կոտորածներն իրագործվում էին այնպիսի դաժանությամբ, որ Ադանայի հոգեւորականությունն ապրիլի 6-ին օսմանյան խորհրդարանին ուղղված հեռագրում նշում էր, որ այդպիսի հալածանքներ տեղի չէին ունեցել անգամ Չինգիզ խանի եւ Լենկ Թեմուրի ժամանակներում[14]։ Հայ հոգեւորականի նկատմամբ իրականացված դաժանության մասին է վկայում կաթոլիկ առաքելության ներկայացուցիչ հայր Ռիգալը. «Մի հոգեւորականի հավատուրաց դարձնելու նպատակով աչքերը հանեցին չերքեզական երկսայրի սրով, որը պտտեցնում էին աչքերի արնաշաղախ բներում այնպես, ինչպես փայտի կտորն են շաղափում։ Այդ նույն սրով կտրեցին նրա լեզուն եւ ջարդեցին ատամները»[15]։

Ադանայի 1909 թ. Կոտորածները. Հոդվածների եւ հրապարակումների ժողովածու, Երեւան, 2013, էջ 33–51։

[12] *Տէ՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 235 եւ 238։*

[13] Յ. Թէրզեան, *նշ. աշխ., էջ 103։*

[14] *Տէ՛ս* Վեր. Հ. Աշճեան, *նշ. աշխ., էջ 21։*

[15] *«Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու», խմբ.՝ Մ. Ներսիսյան, Երեւան, 1991, էջ 258։*

Ջարդերից զերծ չմնացին նաեւ հարանվանությունների՝ Հայ ավետարանական, Հայ կաթոլիկ Եկեղեցիների ներկայացուցիչները։ Մարտի 31-ին, երբ կենտրոնական իշխանությունն զբաղված էր Կ. Պոլսում հակասահմանադրական ցույցերը ճնշելով, Օսմանիեի մոտակայքում քաղաքի փոխկառավարչի թողտվությամբ դաժանաբար ողջակիզվեց Հայ ավետարանական Եկեղեցու Հասան Բեյլիի 23 (ըստ որոշ տեղեկությունների՝ 11)[16] հոգանոց պատվիրակությունը, որը մեկնում էր Ադանա՝ Հայ ավետարանական Եկեղեցիների ապրիլի 4-ին նախատեսվող տարեկան համագումարին՝ «Հոգեւոր պետերու Կիլիկեան միութեան ժողով»-ին մասնակցելու համար[17]։ Նույն ճակատագրին արժանացան նաեւ Մարաշից, Այնթապից եւ Ուրֆայից եկած ու Սայ-Կեչիտում հավաքված 9, Զայրը-Աղչը եւ Համիդիե հասած ավետարանական 7 հոգեւոր առաջնորդները։ Նրանց նկատմամբ իրականացված վայրագությունները չէին զիջում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետեւորդներին բաժին հասած տառապանքներին։ Անաստաս Ատոսիտիսը, մեջբերելով բողոքական հոգեւորականի վկայությունը, մատնանշում է, որ Հասան Բեյլիի հայ բողոքական պատվելիի կինն ապրիլյան կոտորածների ժամանակ կորցրել էր ամուսնուն, երկու որդուն, չորս եղբորը եւ բազմաթիվ ազգականների[18]։

Այրվում ու կործանվում են նաեւ ճիզվիտական, ասորական, քաղդեական, լատին բոլոր եկեղեցիները՝ բացի հունաց եկեղեցուց, որը գտնվում էր քրիստոնեական թաղի ծայրամասում։ Ամերիկացի պատմաբան Ջոզեֆ Գրինը նշում է. «...Կոստանդնուպոլսի խռովության իսկ օրը Ադանա քաղաքի ու նահանգի մահմեդական բնակչությունը, որին հրահրում էին Կոստանդնուպոլսից, հարձակվեց քրիստոնյա հպատակների վրա եւ մի քանի օրվա ընթացքում կողոպտեց ու սպանեց 20 000 հայի, ավերեց քրիստոնեական բազմաթիվ գյուղեր, եկեղեցիներ, դպրոցներ, սպանեց մեծ թվով վարդապետների, այդ թվում՝ ամերիկացի երկու միսիոների եւ 20 բողոքական քահանայի, ինչպես նաեւ՝ վարժարանի մի պրոֆեսորի... խռովությունն ու կոտորածը... հրեշավոր սուլթան Աբդուլ Համիդի վերջին ճիգերն էին»[19]։

---

[16] *Տես «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 227։*

[17] *Տես* Ռ. ՃԵՊԵՃԵԱՆ, *Ինքնակենսագրութիւն, յուշեր եւ գործունէութիւններ, Հալէպ, 1999, էջ 18–19։*

[18] *Տես* Ա. ԱՏՈՍԻՏԻՍ, *Հայերը եւ երիտասարդ Թուրքերը. Կիլիկիոյ կոտորածները, հտ. Ա., Հալէպ, 2009, էջ 89–90։*

[19] Rev. J. K. Greene, Leavening the Levant, Boston-New-York-Chicago, 1916, p. 42.

Առաջին ջարդից հետո՝ ապրիլի 5—11-ը, իշխանությունները հայերին խաղաղության կոչ են անում: Զինվորական ատյանը հայ հոգեւորականներից պահանջում է հավաքել եւ կառավարությանը հանձնել ինքնապաշտպանության դիմած հայերի զենքերը, «եթէ ոչ ուրիշ ջարդ մըն ալ կրնայ պատահիլ»[20]: Արդյունքում՝ իշխանությունները խաբեությամբ հավաքում են հայերին պատկանող զինամթերքը: Իրենց ապահովագրելով հայերի հնարավոր նոր դիմակայությունից՝ Թուրքերը Ռումելիից՝ եւրոպական Թուրքիայից բերված 3 գունդ զինվորների մասնակցությամբ, նախապես կազմակերպված սադրանքի միջոցով (իբրեւ հայերն իրենց եկեղեցու զանգակատնից կրակել են Թուրքական բանակի վրա) երկրորդ անգամ՝ ապրիլի 12—13-ին Ադանայում կազմակերպեցին նոր կոտորած[21]:

Ապրիլի 13-ին ճիզվիտ հայերը, հայտնվելով անելանելի իրավիճակում, որոշում են ժողովրդին մատնել բախտի քմահաճույքին եւ «...իրենց խաչին ներքեւ ապաստանած ժողովուրդը տանիլ ոչխարներու հօտերու պէս յանձնել կառավարութեան գութին... Ինչ կ'ուզեն, թող ա՛ն ընեն...»[22]: Նրանց կոչով հայության խլյակները «...բոկոտն, գլխաբաց, անսուաղ, յուսահատ...»[23] Թափոր-Թափոր հասնում են կուսակալանիստ Սերայի եւ Սիհուն գետի միջեւ ընկած պարտեզներն ու սպասում իրենց ճակատագրին:

Ապրիլի 13-ին երկրորդ անգամ իշխանության եկած Աբդուլ Համիդ Բ.-ն, որը վայելում էր իր 33-ամյա գահակալության վերջին օրը եւ Կ. Պոլսում վերջին կռիվն էր մղում երիտԹուրքական «Ազատության բանակի» դեմ, «ներում» է շնորհում հայերին՝ պահանջելով, որ նրանք քանդեն սահմանադրության պատվին Ադանայի քաղաքապետարանի շենքի առջեւ կանգնեցված «Ազատության կամարը» եւ բացականչեն «փատիշահըմ չօք եաշա» («մեր սուլԹանը շատ ապրի» — Վ. Հ.)[24]:

1909 Թ. ապրիլի 1—4-ը եւ 12—13-ը կենտրոնական ու տեղական իշխանությունների փոխհամաձայնությամբ Ադանայում տեղի ունեցած խաղաղ բնակչության կոտորածի արդյունքում զոհվեց մոտ 18 627 հայ[25], հրո ճարակ

---

[20] *«Ատանայի հայոց պատմութիւն», էջ 243:*

[21] *Տե՛ս Հ. ՂԱԶԱՐԵԱՆ, Ցեղասպան Թուրքը, Պէյրութ, 1968, էջ 15:*

[22] *«Ատանայի հայոց պատմութիւն», էջ 250:*

[23] *Տե՛ս անդ:*

[24] *Տե՛ս անդ, էջ 251—252:*

[25] *Տե՛ս Հ. ՊՈՂՈՍՅԱՆ, Զեյթունի պատմությունը 1409—1921 ԹԹ., Երեւան, 1969, էջ 367: Ըստ մեկ այլ վկայության՝ Ադանայի հայ ազգաբնակչության զոհերի Թիվը կազմում էր 23 500. տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1910 Թ. ապրիլի 2, Թիւ 73: Աշխարհում առաջին հայ կին դիվանագետ,*

դարձավ 5189 տուն[26], երեք հարյուր կալվածք, հափշտակվեց ավելի քան տասը հազար գլուխ անասուն, իսկ նյութական վնասը կազմեց 20 մլն թուրքական լիրա (ժամանակի փոխարժեքով՝ մոտավորապես 500 մլն ֆրանկ)[27]։ Պատահական չէ, որ երիտթուրքերի պարագլուխներից Ջեմալ փաշան, որն Ադանայի արյունալի դեպքերից չորս ամիս անց՝ օգոստոսի կեսերին նշանակվել էր Ադանայի վիլայեթի նահանգապետ, հաշտեցման նպատակով 1910 թ. հունվարի 23-ին Ադանայի հայ եւ թուրք պետական, ռազմական ու հոգեւոր երեւելիների պատվին կազմակերպած խնջույքում արտասանած իր ճառում այդ կոտորածները գնահատում էր քրիստոնյաների համար որպես նյութական, իսկ մահմեդականների համար՝ բարոյական վնաս[28]։ Կոտորածների հետեւանքով կործանվեց 32 եկեղեցի եւ զոհվեց 42 հոգեւորական[29]։ Հաշվի առնելով այդ ամենը՝ Նյու Յորքում տպագրվող “World Almanax” *պարբերականն Ադանայի 1909 թ. դեպքերը բնութագրել է որպես «հակաքրիստոնէական ապստամբութիւն Ադանայում»[30]։ Կոտորածներից հետո «շքեղ Ադանան» դարձավ «ղըյմա Ադանա» («մսաղաց Ադանա»), իսկ կոտորածի գիշերը կոչվեց «Զամա–ղ ջէլլէնդի» («գոմեշը գժվեց»)[31]։*

Երիտթուրքական կառավարող շրջանները, խեղաթյուրելով պատմական իրական փաստերը եւ խուսափելով մեղսակցությունից, ջանում էին որպես Ադանայի ջարդերի պատասխանատու ներկայացնել քաղաքի

Ճապոնիայում Հայաստանի Առաջին Հանրապետության դեսպան Դիանա Աբգարը, հիմք ընդունելով ամերիկացի ականատես Ի. Գ. Ֆրայերի վկայությունները, զոհերի թիվը ներկայացնում է 63 հազար. տե՛ս «Դիանա Աղաբեկ Աբգար. կեանքը եւ գործունէութիւնը», Նոր Ջուղա, 2011, էջ 77։

[26] *Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Յուսուֆ Քեմալի հիշատակած թիվը վերաբերում է միայն այն շինություններին, որոնք ենթակա էին վերականգնման. տե՛ս «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում...», էջ 265։*

[27] *Հմմտ.* Հ. Մարտիրոսյան, *Կիլիկիայի 1909 թվականի ապրիլի հայկական կոտորածը եւ երիտասարդ թուրքերի պատասխանատվության հարցը. տե՛ս «Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ»,* V, *Թուրքիա, էջ 301։*

[28] *Տե՛ս* Յ. Թէրզեան, *նշ. աշխ., էջ 254. նաեւ՝* Հ. Պողոսյան, *նշվ. աշխ., էջ 369 ։*

[29] *Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավորներն էին՝ Միքայել վրդ. Աջապահյանը (Միսիս), Մկրտիչ վրդ. Թապագյանը (Համիդիե), Կարապետ քհն. Թելլալյանը (Համիդիե), Արսեն վրդ. Հարությունյանը (Անտիոք), Դանիել վրդ. Հակոբյանը (Անտիոք), Ստեփան/Արսեն քհն. Գոփուշյանը (Ադանա), Պետրոս քհն. Քեշիշյանը (Հասան-Բեյլի), Հովհաննես քհն. Քեշիշյանը (Հասան-Բեյլի), Ներսես քհն. Պողոսյանը (Հասան-Բեյլի), Վահան քհն. Տեր-Ստեփանյանը (Պահչե), Հովհաննես քհն. Քեշիշյանը (Լափուճլը), Ղեւոնդ քհն. Քեշիշյանը (Լափուճլը), Մկրտիչ քհն. Ջափարճյանը (Խարնը), Պողոս քհն. Տեր-Պողոսյանը (Օճագլը), Հակոբ քհն. Նալբանդյանը (Գըրըգխան), Արմենակ քհն. Դոնադոսյանը (Անտիոք). այս կապակցությամբ տե՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 267—268։*

[30] *Տե՛ս «Դիանա Աղաբեկ Աբգար...», էջ 77։*

[31] Վ. Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երեւան, 2011, էջ 433։*

հայոց հոգեւոր առաջնորդ Մուշեղ եպս. Սերոբյանին[32], որն իբր կոտորածի օրերին զոհվել էր իր կացարանում՝ ռումբի պայթյունի հետեւանքով[33]։ Սակայն իրականում Մուշեղ սրբազանը Ադանայի դեպքերից մոտ մեկ ամիս առաջ՝ մարտի 4-ին, մեկնել էր Եգիպտոս՝ Ադանայում կառուցվող երկրագործական վարժարանի համար գումար հանգանակելու նպատակով։ Ավելին, երբ նա լսում է աղետի լուրը, անգլիական նավով շտապում է վերադառնալ Ադանա։ Թուրքական իշխանություններն արգելում են նրա մուտքը Մերսին՝ որպես անցանկալի անձ։ Օսմանյան իշխանությունները տեղեկացնում են Մերսինի անգլիական հյուպատոսին եւ սպառնում՝ «...եթէ Մուշեղ ցամաք ելլէ՝ թէ՛ Մերսինի մէջ դէպքեր կը պատահին եւ թէ՛ Ատանայի եւ շրջակայից մէջ նոր խռովութիւններ կը ծագին. ուստի Խտիական նաւապետին հրաման ըրէք, որ Մուշեղը արգիլէ նաւէն դուրս ելլելու»[34]։ Անգլիական հյուպատոսի հրահանգով Մուշեղ եպիսկոպոսը արգելափակվում է նավում եւ հետ է վերադառնում Ալեքսանդրիա։ Եթե նա իսկապես մեղավոր էր, ապա ամենահարմար տարբերակը նրան ձերբակալելն ու պատասխանատվության ենթարկելն էր եւ ոչ թե հետ ուղարկելը։

Ջեմալ փաշան նշում է, որ «իրենից ավելի լավ որեւէ մեկը չէր կարող ծանոթանալ հոգեբանական այն նախադրյալներին, որոնք առաջ բերեցին այդ կոտորածը»[35]։ Անտեսելով իրականությունը Ադանայի ջարդերի կազմակերպման գործում՝ նա մեղավոր է համարում միայն հայերին, հատկապես՝ վերակազմյալ հնչակյան կուսակցության անդամ Մուշեղ եպիսկոպոսին[36]։

---

[32] *Տե՛ս* Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, *1950, էջ 456։ Մուշեղ եպս. Սերոբյանը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ազատախոհ ու խիզախ հոգեւորականներից էր։ Նա ծնվել է 1869 թ. Իզմիթ (Արսլան բեկ) քաղաքում, սովորել Արմաշի դպրոցում, իսկ 1895 թ. ձեռնադրվել վարդապետ։ 1905 թ.Մուշեղ եպս. Սերոբյանը դառնում է Ադանայի հոգեւոր առաջնորդ եւ իր նրբամիտ քաղաքականությամբ ձեռք է բերում Ադանայի նախկին կուսակալ Պահրի փաշայի համակրանքը։ Սահակ Բ. Խապայան կաթողիկոսը, գնահատելով նրա մարդկային ու հոգեւոր արժանիքները, 1906 թ. հոկտեմբերի 28-ին (առանց Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի համաձայնության) նրան ձեռնադրեց եպիսկոպոս։ Այս քայլն առաջ բերեց Արեւմտյան Հայաստանի կրոնական բարձրագույն երկու իշխանության վիճաբանություն, որի հետեւանքով Կ. Պոլսի պատրիարքությունը Մուշեղ եպս. Սերոբյանի հոգեւոր պաշտոնավարումը ճանաչեց միայն կաթողիկոսության կիլիկյան թեմերի շրջանում. տե՛ս* Մ. Քէլէշեան, *Սիս-Մատեան. Պատմական, բանասիրական, տեղագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ, Պէյրութ, 1949, էջ 234։*

[33] *Տե՛ս* D. Arikoğlu, Hatıralarım: Milli Mücadele: Çukurova'da Fransiz işgali ve kanlı savaışlar, Birinci Büyük Millet Meclisi, yurtta çeşitli isyanlar, yunanlıların denize dökülmesi, Atatürkten hatıralar, resimler vesikalar. İstanbul, 1961, *էջ 54։*

[34] *«Ատանայի հայոց պատմութիւն», էջ 225, 304։*

[35] *Տե՛ս* «Записки Джемаль Паши 1913—1919 гг.», Тифлис, 1923, *էջ 210։*

[36] *Տե՛ս անդ։*

Ջեմալ փաշայի այս կեղծ տեսակետն է պաշտպանում նաեւ Ի. դարի թուրք պատմաբաններից Իսմայիլ Համի Դանիշմենդը, որն իր «Օսմանյան պատմության համառոտ ժամանակագրություն» քառահատոր աշխատության վերջին գրքում պնդում է, թե՝ «Ադանայի դեպքը» կազմակերպել էր այնտեղի հայ հեղափոխական եպիսկոպոս, Մուշեղ անունով արյունարբու հոգեւորականը[37]*։*

Սակայն քրդական ծագմամբ թուրք լրագրող Մեւլան Զադե Ռիֆաթը, որ Միություն եւ առաջադիմություն կուսակցության գաղտնի ժողովների անմիջական մասնակիցն է եղել ու քաջատեղյակ է դրա ողջ գործունեությանը, անձնական հուշերի եւ փաստական հարուստ նյութերի հիման վրա նկարագրելով Կիլիկիայի 1909 թ. դեպքերը՝ հավաստում է, որ կոտորածների իրական կազմակերպիչը ոչ թե Մուշեղ եպս. Սերոբյանն էր, այլ երիտթուրքական կուսակցությունը՝ նախապես որոշած ու գործադրած իր քաղաքականությամբ[38]*։*

Ի դեպ, Կիլիկիո հայերի 1909 թ. կոտորածներից հետո միջազգային մամուլի էջերում շրջանառվում էր այն մտայնությունը, որ այդ նախճիրը համիդյան կոտորածների քաղաքականության վերջաբանն էր[39]*։ Մուշեղ եպս. Սերոբյանը, ապա նաեւ Հակոբ Թերզյանը առաջին հայ հեղինակներն էին, որոնք բացահայտեցին Ադանայի 1909 թ. կոտորածների ժամանակ երիտթուրքերի հանցապարտ քաղաքականության խորամանկ էությունը։ Մուշեղ եպիսկոպոսը 1909 թ. ֆրանսերենով հրատարակած իր արժեքավոր աշխատության մեջ*[40] *եւ «Հայկական նոր ջարդերի նախօրյակին» հոդվածում*[41] *վեր հանեց եւ մերկացրեց երիտթուրքերի անմիջական մասնակցությունը 1909 թ. կոտորածների կազմակերպման գործում՝ շեշտելով, որ Կիլիկիայի ջարդերն ամենեւին էլ վերջինը չէին, այլ իթթիհատի կառավարության ջարդարարական քաղաքականության սկիզբն էին։*

---

[37] *Տե՛ս* I. Danışmend, İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi 4 Cilt Takim, Cilt 4, İstanbul, 1947, *էջ 374։*

[38] *Տե՛ս* Մ. Ռիֆաթ, *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երեւան, 1990, էջ 104–111։*

[39] *Այդ մասին առավել հանգամանորեն տե՛ս* Ա. Խաչատրյան, *Ադանայի 1909 թ. կոտորածի լուսաբանումը արեւմտահայ մամուլում, ՊԲՀ, 2009, թ. 1, էջ 3–14.* Տ. Ղալթախչյան, *Ադանայի 1909 թ. կոտորածների առաջին արձագանքները արեւմտահայ մամուլում, ԼՀԳ, 2015, թ. 1, էջ 3–13։*

[40] *Տե՛ս* Mgr Mouchegh [Serobian], Les Vêpres ciliciennes. Les responsabilités. Faits et documents (Histoire), Alexandrie, *1909։ Մեկ տարի անց աշխատությունը համառոտ տարբերակով թարգմանվել ու հրատարակվել է հայերեն. տե՛ս վերեւում մեր նշած աշխատությունը։*

[41] *Տե՛ս* Mgr Mouchegh, À la veille des nouveaux massacres arméniens, La Revue, Paris, 15 août 1910։

Ադանայի հայ բնակչության կոտորածների առնչությամբ Սահակ Բ. Խապայանն ու հայ բարձրաստիճան հոգեւորականները բողոք-խնդրագրերով եւ խստառճ հեռագրերով դիմեցին Գոզանի (Սսի) մյութեսարիֆին, ներքին գործերի նախարարությանը, արդարադատության նախարարին, կայսերական պալատին, Օսմանյան խորհրդարանին, Կ. Պոլսի պատրիարքարանին՝ պահանջելով պատժել թուրք ոճրագործներին, վերականգնել արդարությունը եւ նյութական օժանդակություն ցուցաբերել անապահով հայերին[42]։ Այսպես՝ Օսմանյան խորհրդարանին ուղղված 1909 թ. հունիսի 11-ի տեղեկագրի վերջում կաթողիկոսը մտահոգություն էր հայտնում, որ եթե Օսմանյան պետությունը եւ քաղաքակիրթ թուրքերը անհոգ գտնվեն ջարդերի հանդեպ ու չցանկանան «օսմանեան ազգին ճակատէն սրբելու ջարդի, հրկիզումի, կողոպուտի, առեւանգութեանց եւ հարստահարութեանց ամօթի արատը... պիտի դիմեմ յոտս աստուածային գահոյից»[43]։

Նախատեսվում էր, որ այդ խնդրով պետք է զբաղվեր հայոց պատրիարքարանը[44]։ Ի վերջո, բողոքների հիման վրա կոտորածների կազմակերպիչներին պատասխանատվության ենթարկելու եւ Օսմանյան խորհրդարանին «Տեղեկագիր» ներկայացնելու համար իր թուրք գործընկեր Յուսուֆ Քեմալի հետ մայիսի 29-ին Ադանա է ժամանում օսմանյան խորհրդարանի էդիրնեի հայազգի պատգամավոր եւ երիտթուրքական կուսակցության անդամ Հակոբ Պապիկյանը. վերջինս եզրակացնում է, որ Միություն եւ առաջադիմություն կուսակցության անդամները մասնակցել էին Ադանայի եղեռնագործության կազմակերպմանն ու իրագործմանը[45]։ Սակայն իր անաչառության եւ արդարամտության համար Հակոբ Պապիկյանը օգոստոսի 1-ին թունավորվում է։

1909 թ. ապրիլի 1-ին սկսած Ադանայի ջարդը տարածվեց ողջ Կիլիկիայով, եւ «նույն բաժինը հասավ նաեւ Սիսին, Այասին ու Պայասին»[46]։ Փորձություններից անմասն չմնաց հատկապես Սիսը (Գոզանը), որը կիլիկյան ամենահայտնի մայրաքաղաքն էր։ Այն կառուցվել էր Հայկական Տավրոսի լանջերին՝ ընդարձակ դաշտում։ Առաջին աշխարհամարտի

---

[42] *Տե՛ս* Մ. Քէլէշեան, *նշ. աշխ., էջ 277։*

[43] *«Կիլիկեան կսկիծներ...», էջ 88։*

[44] *Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1910, փետրուարի 19, թիւ 39։*

[45] *Այդ մասին առավել մանրամասն տե՛ս «Ատանայի եղեռնը. Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի, օսմանեան երեսփոխան էտիրնէի», Կ. Պոլիս, 1919, էջ 42։*

[46] *Տե՛ս* «Геноцид армян в Османской империи». «Сборник документов и материалов», под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982, *էջ 193։*

նախօրյակին քաղաքն ուներ 3500 բնակիչ, որոնցից 2500-ը հայադաւան էին, 300-ը՝ հայ կաթոլիկ եւ բողոքական, իսկ 700-ը՝ մահմեդական[47]։ Քաղաքում էր գտնվում Կիլիկիո կաթողիկոսարանը, իսկ Սսի մոտակայքում՝ Անարզաբայի (Անավարզայի) բերդը[48]։

1908 թ. սահմանադրության ընդունումը ոգեւորություն առաջացրեց բնակչության շրջանում։ Գավառապետ Մուսա Քյազիմ բեկը, ելույթ ունենալով քաղաքի վանքերից մեկում, հայ եւ թուրք ժողովուրդների բարեկամություն ու հավասարություն հռչակեց[49]։ Բացվեցին վարժարաններ՝ ազատ ուսուցման ծրագրերով եւ կուսակցական ակումբներ[50]։ Սակայն այդ ամենից հետո էլ շարունակվեցին ձերբակալությունները, սպանությունն ու բռնությունները։ 1908 թ. հուլիսի 10-ին Սսի մոտակայքում գազանաբար հոշոտվեց երեք հաճնցի։ Ձերբակալված ոճրագործները հայտարարեցին, որ «քրիստոնեաները ջարդելու գաղտնի կազմակերպութիւն մը կայ, եւ թէ իրենք ալ անոր հրամանը գործադրած են»[51]։ Նրանք թեեւ մահվան դատապարտվեցին, սակայն բանտից փախան եւ միայն 1910 թ. կախաղան բարձրացվեցին Սսի Բալաբ Եղի կոչվող հրապարակում[52]։

Ռամազանի (Ramazan կամ Ramadan Bayram*) ընթացքում Սսի թուրք հոգեւորականն իր քարոզում չվարանեց նշելու, որ «մենք գեաւուրներու հետ եղբայր չենք կրրնար ըլլալ, անոնց հետ միութիւնը անկարելի է։ Շերիաթը բացարձակօրէն կարգիլէ այդ բանը, չենք կրրնար մեր ծոցը պահել օձերը, որոնց խայթող ըլլալուն կասկած չունինք»[53]։*

Քաղաքի կաթոլիկ վարդապետի (անունը մնում է անհայտ) սադրանքով ձերբակալվեցին Եզնիկ քահանան, Գրիգոր էֆ. Գյոքչյանը եւ Հարություն աղա Գասպյանը, սակայն հարցաքննությունից հետո ազատ արձակվեցին[54]։

Ապրիլի 1-ին՝ Զատկին հաջորդող երկուշաբթի օրը, երբ Ադանայում արդեն արյան գետեր էին հոսում, դեպքերից անտեղյակ սսեցիները, ավանդույթի համաձայն, հավաքվեցին մոտակա դաշտում՝ դիտելու հայ

---

[47] *Տե՛ս «Մատենադարան «Արաքս»-ի. «Կիլիկիա. փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ», Սանկտ Պետերբուրգ, 1894, էջ 151։ Ըստ մեկ այլ վկայության՝ Սիսն ուներ 3.700 բնակիչ, որոնցից 3000-ը հայեր էին. տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1910, ապրիլի 1, թ. 72։*

[48] *Տե՛ս* Հ. Տէվէճեան, *նշ. աշխ., էջ 96։*

[49] *Տե՛ս անդ, էջ 111։*

[50] *Տե՛ս անդ, էջ 542։*

[51] Յ. Թէրզեան, *նշ. աշխ., էջ 13։*

[52] *Տե՛ս* Մ. Քէլէշեան, *նշ. աշխ., էջ 544։*

[53] *Անդ։*

[54] *Տե՛ս անդ, էջ 541։*

եւ թուրք ըմբիշների մենամարտերը։ Թուրքերը՝ բոլոր անցուդարձներից տեղյակ եւ մինչեւ ատամները զինված, պատրաստվել էին թուրք ըմբիշի պարտության դեպքում, առանց հապաղման, սկսելու կոտորածը։ Բարեբախտաբար, սսեցի մարդասեր մի թուրք հայերին զգուշացնում է հնարավոր վտանգի մասին եւ կեղծ պարտության միջոցով հայերը կարողանում են առժամանակ խուսափել ջարդից, որից հետո թուրքերը հայտարարում են. «Թո՛ղ գեաւուրները օր մ՚ալ ապրին»[55]։

Ապրիլի 2-ին Սիս հասավ Սայ-Կեչիտի ողբերգության լուրը, որտեղ սպանվել էր 30 բողոքական քարոզիչ, ի թիվս այլոց նաեւ Սսի 38-ամյա հովիվը՝ Մելիտոն Մալյանը[56]։

Շատ ծանր տպավորություն թողեց նաեւ 28-ամյա Միքայել ծ. վրդ. Աջապահյանի նահատակության լուրը, որն իբրեւ կաթողիկոսական փոխանորդ զատկական արարողություններին մասնակցելու համար ուղարկվել էր Միսիս[57]։ Նա խուժանի կողմից վայրագորեն խոշտանգվում եւ անդամահատվում է։

Սահակ Բ. Խապայան կաթողիկոսը, որը մի քանի օր պաշարված էր մնացել վանքում[58], տեսնելով դրության լրջությունը, Հաճընից զինված օգնություն խնդրեց Սսի հայերի ջարդը կանխելու համար[59]։

Իր պատասխան հեռագրում Հաճընի առաջնորդ Ներսես եպս. Դանիելյանը հայտնում էր, որ մինչեւ «Զէյթունի ոյժերն ալ հասնին մենք արդէն 500 հաճնցիներ ճամփայ հանեցինք»[60]։ Երբ նրա հեռագիրը հասավ Սսի մյութեսարիֆին, վերջինս սարսափած վազեց կաթողիկոսի մոտ եւ խոստացավ քաղաքը պաշտպանել բաշիբոզուկներից, միայն թե հաճնցիները չգան Սիս։ Երկար տատամսումներից հետո տեղական իշխանությունը որոշեց զենք բաժանել հայերին։ Ղեւոնդ ծ. վրդ. Թուրսարգիսյանի եւ Գյուտ ծ. վրդ. Մխիթարյանի գլխավորությամբ կազմվեցին կամավորական խմբեր։ Քաղաքի շուրջը կառուցվեցին պատնեշներ, իսկ կանայք ու երեխաները պատսպարվեցին վերին թաղում եւ Մայրավանքի պարիսպների հետեւում։ Ինչպես Մ. Քելեշյանն է նշում, ճակատագրական այդ պահին

---

[55] *Տե՛ս անդ, էջ 545։*

[56] *Տե՛ս Յ. Թէրզեան, նշ. աշխ., էջ 159։*

[57] *Տե՛ս Գ. Զագմագճեան, Տէր, զի բացցին աչք մեր, Կիպրոս, 1957, էջ 7–9։*

[58] *Տե՛ս Ե. Հ. Քասուրնի, Հանդիպումներ ճանապարհին. դէմքեր, դէպքեր, վայրեր (ծանօթագրութիւններ), Պէյրութ, 2010, էջ 252։*

[59] *Տե՛ս «Հասկ», Անթիլիաս-Բէյրութ, 1939, նոյեմբեր-դեկտեմբեր, թ. 11–12, էջ 146։*

[60] *Մ. Քէլէշեան, նշ. աշխ., էջ 545։*

«սիսեցի թուրքերն ալ հայերու հետ էին»[61]։ Թուրքերից ու հայերից կազմվեց 50 հոգանոց մի հեծելազոր, որի հրամանատարներն էին ալբանացի Գոլ Աղասին եւ թուրք Դելի Մեթոն (Մահմեդ)[62]։ Այս հեծելակը դիրքավորվեց ռազմավարական առումով ամենավտանգավոր բարձունքին։

Սահակ Բ. կաթողիկոսի հրամանով բացվեցին վանքի ամբարները եւ այնտեղ եղած ամբողջ հացահատիկն ու մյուս մթերքները բաժանվեցին կարիքավորներին եւ քաղաքի պաշտպաններին։ Կաթողիկոսը հաճախ էր լինում կռվի առաջնագծում եւ իր հորդորներով ու խրատներով ոգեշնչում կռվողներին, որոնք երդվում էին մինչեւ վերջին հնարավորությունը դիմադրել թշնամուն[63]։

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ Սսի մյութեսարիֆը ապրիլի 3-ին հեռագրում է Ադանայի կուսակալին եւ խնդրում. «Սիսի, Ղարսպազարի շրջակայից մէջ հայոց կեանքը վտանգի մէջ ըլլալով զինուորական ոյժ ղրկեցէք»։ «Օգնությունը» չհապաղեց. ուղարկվեց Ռումելիից բերված զինվորական ուժը, որը պատրաստվում էր Սիսում իրականացնել այն, ինչ արդեն կատարել էր Ադանայում, այն է՝ կոտորել հայ բնակչությանը։ Մինչ այդ, Սահակ Բ. կաթողիկոսը ապրիլի 4-ին եւ 7-ին հեռագրեր ուղարկեց Կ. Պոլիս հետեւյալ բովանդակությամբ. «Ամէն կողմ ջարդերն ու հրդեհները կը շարունակուին. խնդրեցէք կառավարութենէն շուտափոյթ տնօրինութիւն»։ Ապրիլի 9-ին եկավ հուսադրիչ պատասխան. «Դիմումներ կը կատարուին, ուր որ անկ է»։

Ապրիլի 14-ին 5000 թուրք գյուղացի շրջապատեց Սիսը եւ պատգամավորություն ուղարկեց Գոլ Աղասու մոտ, որ քաղաքը հանձնվի։ Մերժողական պատասխան ստանալով՝ նրանք անցան հարձակման, սակայն պարտություն կրեցին ու նահանջեցին՝ թողնելով տասնյակ դիակներ։ Արտակարգ խիզախություն դրսեւորեց Կիլիկիո աթոռի միաբան Ղեւոնդ ծ. վրդ. Թուրսարգիսյանը, որն ստացած վերքերից մահացավ 1910 թ. Կ. Պոլսի Ս. Փրկչի ազգային հիվանդանոցում[64]։

Նույն օրը Ռումելիից բերված բանակի զինվորական կենտրոնը, որը խուժանի հետ միացած սաստիկ կոտորած էր իրականացրել Ադանայում, հեռագրեց Սսում գտնվող ուժերին՝ իրենց օրինակին հետեւելու կոչով։

---

[61] Անդ, էջ 546։

[62] Վերջիններս, ինչպես նաեւ մյութասարիֆ Մուհարրեմ բեյը հետագայում պաշտոնազրկվեցին եւ մահապատժի ենթարկվեցին քեմալականների կողմից։

[63] Տե՛ս Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 145։

[64] Տե՛ս անդ, 145։

Սսի զինվորական վարչությունը, հրամանին հնազանդ, գրավեց բերդը եւ թնդանոթներն ուղղեց քաղաքի վրա։ Դրությունը դարձավ սպառնալից։ Ղեւոնդ եւ Գյուտ վարդապետները դիմադրության աննկուն պատրաստակամությամբ տագնապալի գիշեր անցկացրին՝ կազմակերպելով նոր ջոկատներ ու փորելով նոր խրամատներ։ Զաբել Եսայանը, խոսելով Սսում տիրող խիստ ընկճված տրամադրության մասին, միաժամանակ դրվատում է սսեցիներին կազմակերպվածության համար[65]։

Այսպիսին էր իրավիճակը Սսում, երբ բացվեց ապրիլի 15-ի առավոտը եւ զարմանալիորեն պարզվեց, որ Կ. Պոլսում դարձյալ հեղաշրջում է տեղի ունեցել եւ կրկին իշխանության եկած երիտթուրքերը հրաման էին ուղարկել անմիջապես դադարեցնել կոտորածները։ Այսպիսով՝ երջանիկ պատահականությամբ քաղաքը զերծ մնաց կոտորածից։

Սսի դեպքերից անմիջապես հետո Սահակ Բ. Խապայանը ջարդին մասնակցած թուրք զինվորականների ուղեկցությամբ ուղեւորվում է Ադանա։ Ճանապարհին ականատես լինելով կոտորածների սարսափներին, տեսնելով անթաղ մնացած հազարավոր հայերի դիակները, հրկիզված հայկական գյուղերը եւ Ադանայի ավերակները՝ նրա հոգին փոթորկվում է[66]։

Կիլիկիայի որոշ շրջաններ զերծ մնացին կոտորածներից հայ հոգեւորականության աշխատության, խոհեմության, ինչ-որ առումով նաեւ սպառնալիքների արդյունքում։ Այսպես՝ հաճնցիները ոչ միայն ինքնապաշտպանվեցին եւ թույլ չտվեցին 10 000 հոգուց բաղկացած «խուժանին» մտնել քաղաք եւ կոտորել Հաճընի հայությանը, այլ նաեւ փրկեցին Սսի հայությանը։ Այսպես՝ Ներսես եպս. Դանիելյանը մի սպառնալից հեռագիր ուղարկեց Սսի մյութեսարիֆին՝ հայտնելով, որ «եթէ վտանգէք Սիսի հայերը, 500 ձիաւորով պատրաստ եմ հասնելու Սիս եւ քարքարի վրայ չձգելու...»[67]։

Ըստ մեկ այլ տեղեկության՝ խոսքը հաճնցի եւ զեյթունցի այն քաջերի մասին էր, որոնք պատրաստվում էին արշավել մինչեւ Ադանա։ Խուճապի մատնված մյութասարիֆն իսկույն միջոցներ ձեռնարկեց եւ Ղարսպազարի հայությունը կարողացավ Ջին Թորոսի ղեկավարությամբ բարեհաջող նահանջել դեպի Սիս[68]։

---

[65] *Տե՛ս Զ. Եսայեան, Աւերակներուն մէջ [Վկայագրութիւն], Ստանպուլ, 2012, էջ 192։*

[66] *Տե՛ս Բաբգէն Ա. աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441էն մինչեւ մեր օրերը)», Անթիլիաս, 1990, էջ 910։*

[67] *«Յեղասպանութենէն վերապրող Հաճընի հպարտ գաւակ Աստուր Ջալեանի յուշերը», Լոս Անջելես, 2015, էջ 116։*

[68] *Տե՛ս Գր. Թաթուլեան, Անթեղուած գաղտնիքներ, Պէյրութ, 1967, էջ 204–05։*

Լինում էին դեպքեր, երբ հայ հոգեւորականները հայերին փրկելու համար օգտագործում էին «մէկ հայ՝ մէկ ոսկի» միջոցը։ Դեպքերի ականատես-վերապրող Արուսյակ Վանեսյանը (ծնվ. 1909 թ.) վկայում է, որ Ադանայի ջարդերի ժամանակ, երբ ժողովրդի մի մասը պատսպարվել էր եկեղեցում, Թոքատի կաթոլիկ սրբազանը ոսկու քսակը ձեռքին գալիս է, ամեն հայի կյանքի համար մեկ-մեկ ոսկի տալիս, ազատում[69]։

Ջարդերի պատճառը քննելու համար կազմվեց պատերազմական ատյան՝ կոտորածից փրկված անմեղ հայերին դատելու համար։ Դեպքերի ականատես հույն հայտնի վաճառական Մավրոմատին 1909 թ. սեպտեմբերի 8 (21)-ին հաստատում էր, որ քրիստոնյաները դատարանում գործը տանուլ էին տալիս եւ կախաղանի արժանի համարվում, եթե նրա հակառակորդը մահմեդական էր[70]։

Կոտորածներից հետո հալածանքներ սկսեցին նաեւ հայ հոգեւորականության նկատմամբ։ Կ. Պոլսի պատրիարք Եղիշե Դուրյանը 1909 թ. դեկտեմբերի 31-ի իր նամակում՝ ուղղված Մատթեոս Բ. Կոստանդնուպոլսեցի Ամենայն Հայոց հայրապետին (1908–1910 թթ.) տեղեկացնում էր, որ Ադանայի պատերազմական ատյանները բանտարկում եւ դատապարտում են նույնիսկ եկեղեցականներին[71]։ Ազգային գործիչների հետ բանտարկվեցին նաեւ Զեյթունի առաջնորդ Վաղարշակ վրդ. Արշակունին, Հաճընի առաջնորդ Ներսես վրդ. Դանիելյանը (իբրեւ «գրգռիչ ատենախօսութիւններ ընող»[72]) եւ Դյորտ-Յոլի առաջնորդական փոխանորդ Սահակ քահանան՝ լոկ այն բանի համար, որ հանդգնել էին պայմանավորվածություն ձեռք բերել Զեյթունի, Հաճընի, Զոք-Մարզվանի եւ լեռնային մյուս շրջանների մահմեդական ազգաբնակչության հետ՝ հայկական գյուղերին վնաս չհասցնելու վերաբերյալ[73]։ Ջերբակալության առնչությամբ Սահակ Բ. Խապայանն իր դժգոհությունն ու բողոքն է հայտնում իշխանություններին՝ նրանց կշտամբելով, որ եթե հոգեւորականներն «ըմբոստ եւ ժողովուրդը ապստամբեցնող են, ուրեմն կը նշանակէ թէ ես ալ ապստամբապետ մըն եմ... Ուստի, թո՛ղ ինձմէ առնուի կայսերական ֆերմանը եւ ես ալ դատուիմ իբր ըմբոստ...»[74]։ Կաթողիկոսի դժգոհությունը տալիս է իր արդյունքը, եւ հոգեւորականներն ազատ են արձակվում։

---

[69] *Տե՛ս* Վ. Սվազլյան, *նշվ. աշխ., էջ 436։*

[70] *Տե՛ս* «Геноцид армян в Османской империи», «Сборник документов и материалов», *էջ 205։*

[71] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 2։*

[72] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 8 շրջ.։*

[73] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 68, թ. 9։*

[74] *«Ատանայի հայոց պատմութիւն», էջ 305։*

Ի վերջո, «վստահությունը» եւ «արդարությունը» վերականգնելու ակնկալիքով՝ երիտթուրքերը ձերբակալեցին կոտորածներին մասնակցած 200 թուրքի, որոնցից 9-ին կախաղան բարձրացրին։ 1912 թ. բանտարկվածներից միայն 86-ն էին մնացել բանտում, որոնք շուտով ներման արժանացան[75]։

1909 թ. զարհուրելի իրադարձությունները ծանր հետեւանքներ թողեցին կոտորածներից մի կերպ փրկված հայ հոգեւորականության կյանքում, քանի որ նրանցից շատերը հայտնվել էին նյութական ծանր վիճակում։ Հոգեւորականությանն օժանդակելու խնդրին էր միտված Սահակ Բ. կաթողիկոսի՝ Ամենայն Հայոց հայրապետ Մատթեոս Բ. Կոստանդնուպոլսեցուն ուղղված 1909 թ. նոյեմբերի 22-ի թիվ 2435 նամակը[76]։

Կոտորածների հետեւանքով կիլիկիահայությունը կանգնեց նաեւ բռնի կրոնափոխության եւ ազգային ուծացման վտանգի առջեւ։ Քիչ չէին դեպքերը, երբ թուրքերը կրոնափոխության դիմաց խոստանում էին փրկություն, սակայն դրժում էին իրենց խոստումը եւ կոտորում հայերին։ Այդ առումով հատկանշական է Խառնիի սպանված հայ քահանայի՝ ջարդերից մազապուրծ եղած կնոջ նամակի այն հատվածը, որը վերաբերում է բռնի կրոնափոխության խնդրին։ Այդ մասին նա նշում է. «Թուրքերը գտած ըլլալով մեր պատսպարուած վայրը, մեզմէ դրամ պահանջեցին։ Այնուհետեւ մեզի ազդարարեցին ուրանալ մեր կրօնքը՝ թուրք դարձնելու համար... Տուզճեանը եւ որդին՝ Սամուէլը, աղայի մը առաջարկեցին 80 թրքական ոսկի՝ որպէս կեանքի փրկագին։ Թուրքը դրամը առաւ եւ զիրենք երկու օր հիւրընկալեց, յետոյ փորձեց զանոնք կրօնափոխ դարձնել։ Երբ անոնք մերժեցին, սպանեց զիրենք։ Նոյն պարագաներու տակ Յակոբեանը եւ իր որդին՝ Աւետիսը, ունեցան նոյն ճակատագիրը...»[77]։

Բնակչության ուծացման խնդիրն ուներ կենսական նշանակություն. Կ. Պոլսի Հայոց միացյալ ընկերության ժողովի ատենապետ Հովակիմյանը Մատթեոս Բ. Կոստանդնուպոլսեցուն ուղղված 1909 թ. հոկտեմբերի 22-ի իր նամակում նշում էր, որ Կիլիկիայում «տասը հազարի մօտ ժողովուրդ ուծանալու վրայ է իր Եկեղեցիէն եւ անխուսափելի կորստեան սահմանուած է...»[78]։

---

[75] *Տե՛ս* ԲԱԲԳԷՆ Ա. ԱԹՈՌԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, *նշ. աշխ., էջ 910։*

[76] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1850, թ. 2, շրջ. 3։*

[77] ՎԵՐ. ԱՒ. ԱՒԱԳԵԱՆ, *Վկայագրութիւն հաւատքի ծառայական ճանապարհորդութեան մը Հասանպէյլիէն (Կիլիկիա) Սառնիա (Գանատա), Պէյրութ, 2010, էջ 341—342։*

[78] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1850, թ. 5։*

Այսպիսով, ինչպես կարող ենք տեսնել այլազան նյութերի եւ վավերագրերի համադրությունից, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը 1909 թ. մեծ դժվարությամբ մաքառեց ու վերապրեց կոտորածների, բռնությունների եւ հալածանքների ահասարսուռ մի ժամանակաշրջան, որն ուղեկցվում էր մահմեդական անհանդուրժողականության եւ կրոնական մոլեռանդության բացահայտ դրսեւորումներով։

РЕЗЮМЕ

В статье рассматриваются исторические события конца 19-го и начала 20-го вв., с помощью которых описывается общая политико-экономическая ситуация в Армянской Киликии, где в начале 1909 года турецкое правительство организовало массовую резню армянского населения. Опираясь на архивные материалы, а так же используя сведения периодической печати того времени и свидетельства очевидцев, автор составляет по возможности всеобъемлющий образ драматических событий, свои выводы и заключения, сопоставляя с общепринятыми научными подходами по данному вопросу.

SUMMARY

The article examines the historical events of the late 19th and early 20th centuries, which helped to restore the general political and economic situation in Armenian Cilicia, where at the beginning of 1909 the Turkish government organized the massacre of the Armenian population. Based on archive materials, as well as using information from periodicals of that period and eyewitness accounts, the author draws up a comprehensive image of those dramatic events making his own conclusions in accordance with scientifically accepted approaches on this issue.